

**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**
08.03.2019



Միրելի՛ հայուհիներ

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ Մարտի 8-ին նշվող գեղեցիկ տոնի կապակցությամբ, որը ձեզ է նվիրված:

Գարնանային զարթոնքի հետ համընկնող հիասքանչ այս օրը եւս մեկ անգամ հուշում է, որ խորհրդանիշն էք նոր կյանքի եւ արարման, հմայքի ու քնքշության: Դուք էք, որ ոգեշնչում էք մեզ, դժվարություններին դիմակայելու ձեր զարմանալի ունակությամբ, իմաստությամբ, անսահման սիրով վստահություն ներշնչում բարդ պահերին, կյանքը դարձնում առավել բարի, լուսավոր եւ հանդուրժողականությամբ լեցուն:

Անուրանալի է ձեր դերը մեր երկրի վաղվա արժանավոր քաղաքացու, հայրենասեր զինվորի, ազգային արժեքները կրող հայ մոր դաստիարակության գործում: Դրան զուգահեռ այսօր մեր հանրային կյանքի, պետական կառավարման եւ շատ այլ ոլորտներում ամեն անկյունում զգացվում է ձեր հոգատար ձեռքն ու ներդրումը, եւցանկանում ենք ձեզ տեսնել առավել ակտիվ ու նախաձեռնող մեր պետականության կառուցման բոլոր բնագավառներում:

Իհարկե, կանանց առնչվող նաեւ բազում խնդիրներ կան, որոնց լուծումը մեր գործունեության առաջնահերթություններից է:

Իսկ տոնական այս օրը, թանկագի՛ն մայրեր, կանայք, քույրեր ու դուստրեր, անկեղծորեն մաղթում եմ ձեզ մեծ երջանկություն, բարեկեցություն, առողջություն, գնահատված ու սիրված լինելու չլքող զգացողություն:

Թ՛ղ Կանանց տոնին ձեզ ուղղված բոլոր ցանկություններն իրականություն դառնան, եւ մարտիության գարնանային լավ տրամադրությունն ուղեկցի ամենքիդ տարվա բոլոր օրերին: